ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/55

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի տնօրեն

Վ.Հարությունյանի (պետական գրանցման վկայական թիվ 03Ա1073333),

«Բեսթ բիլդինգ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ

Հ.Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 23.06.2020թ.),

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից 19.06.2020թ. ներկայացված (22.06.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/55 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 19.06.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 25-ի որոշման հիման վրա հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթ:

Տվյալ ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի ապրիլի 9-ը:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով աշխատանքների կատարման սկիզբ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման ավարտը՝ 30.06.2020թ.:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ–ն՝ 1-ին չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն, որին էլ անգործության ժամկետի ավարտից հետո կառաջարկվեր պայմանագրի նախագիծը:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արդեն 14.05.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, քանի որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի հայտը մերժվել էր կեղծ փաստաթղթեր ներկայացնելու համար և սահմանվել անգործության ժամկետ, որի ավարտից հետո կառաջարկվի մասնակցին պայմանագրի նախագիծը:

01.06.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աջաջարկվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բանկային երաշխիքները և կնքել պայմանագիր:

12.06.2020թ. (9-րդ աշխատանքային օրը) «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ուղեկցական գրությամբ պատվիրատուին է ներկայացրել բանկային երաշխիքները և կնքված պայմանագիրը: Կնքված պայմանագրով, պատվիրատուի հետ ձեռք բերված նախնական բանավոր համաձայնության համաձայն, որպես աշխատանքների կատարման վերջնաժամկետ նշվել է 2020թ. օգոստոսի 31-ը: Համապատասխանաբար բանկային երաշխիքները նույնպես ներկայացվել են նոր՝ երկարացված ժամկետով:

12.06.2020թ. ուղեկցական գրությամբ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն սույն թվականի ապրիլի 9-ին մասնակցել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով գնման ընթացակարգին և գնային առաջարկով զբաղեցրել է երկրորդ տեղը, իսկ հաղթող է ճանաչվել «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ն: Հետագայում պարզվել է, որ առաջին տեղը զբաղեցրաց կազմակերպությունը կեղծել է բանկային երաշխիքները, որի արդյունքում սկսվել է իրավական գործընթացներ տվյալ կազմակերպության հետ և արդյունքում 01.06.2020 թվականին «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին Ձեր կողմից աջաջարկվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բանկային երաշխիքները և կնքել պայմանագիր: Ապրիլի 9-ին «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու ժամանակ մենք տեղյակ ենք եղել, որ աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված 30.06.2020թ-ը և մենք հաղթող ճանաչվելու դեպքում շինարարական աշխատանքներ իրականացնելու համար կունենայինք առնվազն 60-ից 70 օրացուցային օր, իսկ հաշվի առնելով ՀՀ–ում հայտարարված արտակարգ դրությունը՝ աշխատանքները ժամանակին չավարտելու դեպքում կունենայինք նաև հնարավորություն՝ օգտվելու ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետի հնարավորությունից և պատվիրատուի համաձայնության դեպքում ևս 30 օր երկարաձգելու վերջնաժամկետը:

Ստեղծված իրավիճակում, եթե «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի հետ 12.06.2020թ-ին կնքվի պայմանագիր, և Դուք 15.06.2020թ. տրամադրեք շինհրապարակը, անկախ մեր կամքից 15 օրում անհնարին է դառնում 30.06.2020թ-ին ավարտին հասցնել տվյալ շինարարական աշխատանքները: Տեղյակ եմ նաև, որ դեռևս չի կայացել տեխնիկական հսկողության մրցույթը, իսկ նոր մրցույթի հայտարարություն 11.06.2020թ-ի դրությամբ դեռ չի հայտարարվել, հետևաբար 12.06.2020թ. պայմանագիր կնքելու դեպքում նույնիսկ մեր կազմակերպությունը իրավունք չի ունենալու իրականացնել շինարարական աշխատանքներ, որը ևս անհնար է դարձնում 30.06.2020 թ-ին շինարարական աշխատանքների ավարտը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով նոր կոռոնավիռուսի

հետ կապված ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությունը՝ խնդրում եմ վերանայել աշխատանքների կատարման վերջնաժամկետը և նոր վերջնաժամկետը հաշվարկել պայմանգրի կնքման պահից 70 օրացույցային օր՝ սահմանել վերջնաժամկետ 31.08.2020թ-ը»:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության՝

1.1. կետի համաձայն՝ որոշվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մերժել ընկերության կողմից ներկայացված առաջարկը:

1.2. կետի համաձայն՝ արձանագրվել է, որ հաշվի առնելով, որ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված է 2020թ. հունիսի 30-ը, այդ ժամկետում անհնար է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն հայտնել ենք, Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ Երևան քաղաքի Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման» աշխատանքների ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 25-ի որոշման հիման վրա հայտարարված «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի ապրիլի 9-ը:

Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով աշխատանքների կատարման սկիզբ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման ավարտը՝ 30.06.2020թ.:

Վերը նշված ընթացակարգին, ի թիվս այլ ընկերությունների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ–ն՝ 1-ին չափաբաժնի մասով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն, որին էլ անգործության ժամկետի ավարտից հետո կառաջարկվեր պայմանագրի նախագիծը:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.05.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետի համաձայն՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, քանի որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի հայտը մերժվել էր կեղծ փաստաթղթեր ներկայացնելու համար /տես՝ թիվ 5 արձանագրություն/ և սահմանվել անգործության ժամկետ, որի ավարտից հետո կառաջարկվի մասնակցին պայմանագրի նախագիծը:

01.06.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աջաջարկվել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բանկային երաշխիքները և կնքել պայմանագիր:

12.06.2020թ. (9-դ աշխատանքային օրը) «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ուղեկցական գրությամբ պատվիրատուին է ներկայացրել բանկային երաշխիքները և կնքված պայմանագիրը: Կնքված պայմանագրով, պատվիրատուի հետ ձեռք բերված նախնական բանավոր համաձայնության համաձայն, որպես աշխատանքների կատարման վերջնաժամկետ նշվել է 2020թ. օգոստոսի 31-ը:

Սակայն, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1. կետի համաձայն՝ որոշվել է համաձայն «Գնումների

մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ մերժել ընկերության կողմից ներկայացված առաջարկը:

Նույն արձանագրության 1.2. կետի համաձայն՝ որոշվել է, որ հաշվի առնելով, որ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված է 2020թ. հունիսի 30-ը, այդ ժամկետում անհնար է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

Գտնում ենք, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված սկզբունքները հետևյալ հիմնավորմամբ.

Նախ, ինչպես արդեն նշել ենք, «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված եղել դեռևս 2020 թվականի ապրիլի 9-ը: Իսկ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն, որին էլ անգործության ժամկետի ավարտից հետո կառաջարկվեր պայմանագրի նախագիծը: Նման ժամկետային պայմաններում ավելի, քան ակնհայտ է, որ «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ն ուներ բոլոր հնարավորությունները մինչև Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար սահմանված աշխատանքների կատարման ավարտը՝ 30.06.2020թ., ավարտեր նախատեսված աշխատանքները: Մինչդեռ դրանից հետո գրեթե մեկ ամիս անց, այն է՝ 14.05.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրությամբ նոր արձանագրվել է, «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է կեղծ փաստաթղթեր ներկայացնելու համար, և նոր այդ ժամկետով ընտրված մասնակից է ճանաչվել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն: Ավելին, դրանից հետո միայն 01.06.2020թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աջաջարկել է 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել բանկային երաշխիքները և կնքել պայմանագիր: Եվ վերոհիշյալ փաստաթղթերը ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել է 12.06.2020թ.: Հատկանշական է, որ 15.06.2020թ. նույն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ քանի որ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված է 2020թ. հունիսի 30-ը, այդ ժամկետում անհնար է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած:

Գտնում ենք, որ նման սեղմ ժամկետային պայմաններում ավելի քան ոչ իրավաչափ է գնահատող հանձնաժողովի կողմից «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելը, քանի որ 15.06.2020թ. նույն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, հաշվի առնելով, որ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված է 2020թ. հունիսի 30-ը, այդ ժամկետում անհնար է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած: Նման պայմաններում անհասկանալի է, թե արդյոք, եթե «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից 12.06.2020թ. ներկացվեր 2020թ. հունիսի 30-ով՝ որպես վերջնաժամկետ, կնքված պայմանագիր, ապա ըստ գնահատող հանձնաժողովի՝ այդ ժամկետում հնարավոր կլիներ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը, եթե արդեն երեք օր անց, այն է՝ 15.06.2020թ. գնահատող հանձնաժողովը հանգել է այն եզրակացության, որ այդ ժամկետում անհնար է կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքները: Մեր կարծիքով ակնհայտ է, որ նման ժամկետային փոփոխությունների պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ոչ թե պետք է ընտրված մասնակից ճանաչեր «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին և 01.06.2020թ. վերջինիս առաջարկեր ներկայացնել բանկային երաշխիքները և կնքել պայմանագիր, այլ միանգամից Ընթացակարգի 1-ին չափաբաժինը հայտարարել չկայացած, ինչպես դա արվեց 15.06.2020թ հանձնաժողովի նիստի արձանագրությամբ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ տվյալ շինարարական աշխատանքների կատարման համար դեռևս չէր կայացել տեխնիկական հսկողության մրցույթը (նախորդ մրցույթը չեղարկվել էր մասնակիցների կողմից կեղծ բանկային երաշխիքներ ներկայացնելու հիմքով), իսկ նոր մրցույթի հայտարարություն 11.06.2020թ-ի դրությամբ դեռ չէր հրապարակվել, հետևաբար նույնիսկ 12.06.2020թ. պայմանագիր կնքելու դեպքում «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն իրավունք չէր ունենալու առանց համապատասխան տեխնիկական հսկողության առկայության իրականացնել շինարարական աշխատանքներ, որը ևս անհնար է դարձնում 30.06.2020 թ-ին շինարարական աշխատանքների ավարտը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից ոչ իրավաչափորեն «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու պայմաններում «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ն ստիպված է եղել պատվիրատուին ներկայացնել գրեթե 30 մլն. ՀՀ դրամ գումարի

պայմանագրի և որակավորման ապահովման բանկային երաշխիքներ, որոնք ձեռքբերելու նպատակով ՍՊԸ-ի կողմից կատարվել են էական ծախսեր:

Նման պայմաններում, գտնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին չպետք է ներկայացվեր պայմանագիր կնքելու առաջարկ կամ նման առաջարկ ներկայացնելու դեպքում համապատասխան ընթացակարգով վերանայվեր պայմանագրի կատարման վերջնաժամկետը, որպեսզի նախ՝ առկա լիներ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունը, և երկրորդը՝ հնարավոր լիներ ժամկետային առումով իրականացնել գրեթե երկու ամիս պահանջող շինարարական աշխատանքները:

Գտնում ենք նաև, որ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ գնահատող հանձնաժողովը կարող էր, ղեկավարվելով Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքներով, վերանայեր պայմանագրի կատարման ժամկետը և ժամկետի հաշվարկը կատարեր ողջամտորեն՝ հաշվի առնելով նաև տեխնիկական հսկողության բացակայության փաստը:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1.Դադարեցնել 14.05.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2.Դադարեցնել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային երաշխիքները ներկայացնելու և պայմանագիր կնքելու առաջարկներ ներկայացնելու մասին որոշումները:

3. Դադարեցնել 15.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության 1.1 կետով «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած առաջարկը մերժելու մասին որոշումը:

4. Ընդունել որոշում՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աշխատանքների կատարման ողջամիտ ժամկետով պայմանագիր կնքելու նոր առաջարկ ներկայացնելու մասին:

Ի լրումն վերը շարադրված բողոքի՝ 02.07.2020թ. Ընկերությունը հայտնել է հետևյալը.

««Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից 19.06.2020թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/55 բողոքի շրջանակներում բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանին պահանջի 4-րդ կետով խնդրել էինք՝

4. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աշխատանքների կատարման ողջամիտ ժամկետով պայմանագիր կնքելու նոր առաջարկ ներկայացնելու մասին:

Հաշվի առնելով, որ պահանջով ներկայացված «ողջամիտ ժամկետ» հասկացությունը կարող է տարածական մեկնաբանությունների տեղիք տալ, և հաշվի առնելով, որ նված շինարարական մրցույթով դեռևս տեղի չի ունեցել տեխնիկական հսկողության մրցույթը, ինչը անհրաժեշտ է շինարարական աշխատանքների կատարման համար, ուստի պահանջի 4-րդ կետը վերաշարադրում ենք հետևյալ խմբագրությամբ.

4. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու նոր առաջարկ ներկայացնելու մասին՝ տեխնիկական հսկողության համապատասխան գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու հետ միաժամանակ:

Խնդրում ենք որպես բողոքի պահանջի 4-րդ կետ ընդունել այս խմբագրությամբ պահանջը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.06.2019թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են բողոքով ներկայացված դիրքորոշումը:

Այնուհետև՝ 20.07.2020թ., Ընկերությունը, ի լրումն բողոքի, հայտնել է հետևյալը.

«Բողոքի լրացումով Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել ենք պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում՝ «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին աշխատանքների կատարման պայմանագիր կնքելու նոր առաջարկ ներկայացնելու մասին՝ տեխնիկական հսկողության համապատասխան գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու հետ միաժամանակ:

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ունեցած տեղեկատվության համաձայն՝ կայացել է Երևան քաղաքի Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի

թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողության գնման ընթացակարգը, և արդեն կնքվել են համապատասխան տեխնիկական հսկողության գնման պայմանագիր:

Գտնում ենք, որ նման պայմաններում Երևան քաղաքի Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների կատարման գնման նպատակով նոր ընթացակարգ հայտարարելը չի բխում Պատվիրատուի շահերից՝ հաշվի առնելով հնարավոր ժամկետների բացթողումը (այդ թվում նաև սեզոնային փոփոխությունները և եղանակի հնարավոր վատթարացումը) և կատարվելիք շինարարության ժամկետների ձգձգումը:

Հայտնում եմ, որ «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթի արդյունքում 1-ին չափաբաժնի մասով «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ–ի հետ պայմանագիր կնքելու դեպքում ՍՊԸ-ն նշված աշխատանքները կկատարի 70 օրացուցային օրվա ընթացքում, այսինքն՝ այն ժամկետում, որը և նախատեսված է եղել տվյալ բաց մրցույթով (հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի ապրիլի 9-ը, «Ռաշն Վոյաժ» ՍՊԸ-ին 16.04.2020թ. ընտրված մասնակից է ճանաչվել, 1-ին չափաբաժնի մասով աշխատանքների կատարման սկիզբ է սահմանվել Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, իսկ աշխատանքների կատարման ավարտը՝ 30.06.2020թ.):

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ տվյալ մրցույթով նախատեսված կապիտալ շինարարության աշխատանքների կատարման համար շինարարական նորմատիվների համապատասխան՝ կատարման ժամկետ է սահմանվում ոչ պակաս, քան 80 օրացուցային օրը, մինչդեռ Բիլդինգ» ՍՊԸ-ն պատրաստ է այդ աշխատանքները կատարել 70 օրացուցային օրվա ընթացքում»:

2. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Երևանի քաղաքապետարանի կողմից (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 29.06.2020թ. ժամը 10:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2020/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2020/55 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի ապրիլի 9-ը:

3. Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ով՝ 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկով սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.06.2020թ

4. Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել «Ռաշն վոյաժ» ՍՊ և «Բեսթ Բիլդինգ» ՍՊ ընկերությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2020թ. թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ն:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2020թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Երևան քաղաքապետարանի կողմից կատարվել է «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի իսկության ճշտում, որի արդյունքում

պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքը չի թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում է կեղծ փաստաթուղթ:

7. Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը, որոշում է կայացրել 2020թ. ապրիլի 16-ի թիվ 4 արձանագրության 2.1 և 2.2 կետերով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընդունված որոշումները չեղյալ հայտարարելու և «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

8. Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին:

9. Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշում է կայացրել հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով Ընկերության հետ կնքել պայմանագիր:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.06.2020թ. թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ 01.06.2020թ. «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանելով 2020թ. հունիսի 30-ը: Ընկերությունը 12.06.2020թ. գրությամբ ներկայացրել է ստորագրված և կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները և դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով վերանայել աշխատանքների կատարման վերջնաժամկետը և սահմանել նոր վերջնաժամկետ՝ մինչև 2020թ. օգոստոսի 31-ը, ինչը հանձնաժողովի կողմից, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի, մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Բեսթ բիլդինգ» ՍՊԸ-ի 19.06.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, 02.07.2020թ. և 20.07.2020թ. ներկայացված բողոքի լրացումները, Պատվիրատուի 20.07.2020թ. գրությունը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է, որ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպես՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 20, 21, Նոր Նորք վարչական շրջանի թիվ 99 և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի թիվ 76 մանկապարտեզների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի համաձայն՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել մինչև 2020 թվականի ապրիլի 9-ը:

Ընթացակարգի հրավերի Հավելված 2-ով՝ 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման օրացույցային գրաֆիկով սահմանվել է հետևյալը.

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Երևան քաղաքի Կենտրոնի վարչական շրջանի թիվ 20 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	30.06.2020թ

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, հայտ են ներկայացրել «Ռաշն վոյաժ» ՍՊ և «Բեսթ Բիլդինգ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2020թ. թիվ 4 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հաղթող (ընտրված) մասնակից է ճանաչվել «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.05.2020թ. թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Երևան քաղաքապետարանի կողմից կատարվել է «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բանկային երաշխիքի իսկության ճշտում, որի արդյունքում պարզվել է, որ ներկայացված բանկային երաշխիքը չի թողարկվել համապատասխան բանկի կողմից և հանդիսանում է կեղծ փաստաթուղթ:

Նույն արձանագրության 1.2 կետի համաձայն՝ հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը, որոշում է կայացրել 2020թ. ապրիլի 16-ի թիվ 4 արձանագրության 2.1 և 2.2 կետերով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընդունված որոշումները չեղյալ հայտարարելու և «Ռաշն վոյաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու վերաբերյալ:

Նույն արձանագրության 1.3 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել գնման ***<u>ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հաղթող (ընտրված) մասնակից ճանաչել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին:</u>***

Նույն արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշում է կայացրել հայտարարել անգործություն և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով Ընկերության հետ կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ***15.06.2020թ. թիվ 6 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ <u>01.06.2020թ. «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ՝ պայմանագրով աշխատանքների կատարման վերջնաժամկետ սահմանելով 2020թ. հունիսի 30-ը</u>***: Ընկերությունը 12.06.2020թ. գրությամբ ներկայացրել է ստորագրված և կնքված պայամանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները և դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով վերանայել աշխատանքների կատարման վերջնաժամկետը և սահմանել նոր վերջնաժամկետ՝ մինչև 2020թ. օգոստոսի 31-ը, ինչը հանձնաժողովի կողմից, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի, մերժվել է:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 19.07.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/2/10770-2020 գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ ***<u>խնդրելով հայտնել, թե քանի օր է անհրաժեշտ 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման համար:</u>***

Ի պատասխան վերը նշված գրության՝ ***Պատվիրատուն 20.07.2020թ. ուղարկված գրությամբ հայտնել է, <u>որ Կենտրոն վարչական շրջանի հ.20 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքների ժամկետը սահմանվում է պայմանագիրը կնքվելու օրվանից մինչև 90-րդ օրացույցային օրը ներառյալ:</u>***

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ մինչև սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտը՝ կողմերի համաձայնությամբ կարող են պայմանագրի նախագծում կատարվել փոփոխություններ, սակայն դրանք չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ՝ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ կողմերի համաձայնությամբ պայմանագրի նախագծում չեն կարող կատարվել փոփոխություններ գնման առարկայի բնութագրերի մասով, սակայն գտնում եմ, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի քննությամբ, հաշվի առնելով Ընկերության շահը, ինչպես նաև այն հանգամանքը, որ վերջինս՝ որպես բարեխիղճ մասնակից, սահմանված ժամկետներում ներկայացրել է ստորագրված և կնքված պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև այն, որ Պատվիրատուի գործողություններով պայմանավորված՝ Ընկերության կամքից անկախ ստեղծվել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետներում՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30.06.2020թ., աշխատանքների կատարման անհնարինություն: Մասնավորապես Ընկերության կողմից պայմանագիրը ստորագրված և կնքված, որակավորման և պայմանագրի ապահովումները Պատվիրատուին ներկայացնելու օրվա դրությամբ, այն է՝ 12.06.2020թ., աշխատանքների կատարման ավարտին մնացած է եղել ընդամենը 18 օրացույցային օր, մինչդեռ, համաձայն Պատվիրատուի, նշված աշխատանքների կատարման համար անհրաժեշտ է 90 օրացույցային օր, այսինքն՝ ակնհայտ է, որ Ընկերության կողմից հնարավոր չէր իրականացնել պայմանագրով սահմանված աշխատանքները նշված կարճ ժամկետներում, ինչի հետևանքով Ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Նման պայմաններում գտնում եմ, որ խախտվել է «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի իրավունքները, ուստիև առկա են բոլոր հիմքերը սույն որոշմամբ պարտավորեցնելու

Պատվիրատուին կատարելու փոփոխություն պայմանագրի նախագծում, որպիսի պայմաններում Ընկերությանը հնարավորություն կընձեռնվի իրացնելու իր իրավունքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից 19.06.2020թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/64» բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու 15.06.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրությունը:

2. Պարտավորեցնել Պատվիրատուին՝ ծանուցելու «Բեստ Բիլդինգ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանագրի նախագիծ՝ սահմանելով Ընթացակարգի 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման համար առնվազն 90 օրացույցային օր ժամկետ՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված:

Բողոքաբերի ստորև ներկայացված պահանջները մերժել.

1. Դադարեցնել 14.05.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 1.3 կետով «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը:

2. Դադարեցնել «Բեսթ Բիլդինգ» ՍՊԸ-ին 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային երաշխիքները ներկայացնելու և պայմանագիր կնքելու առաջարկներ ներկայացնելու մասին որոշումները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**